ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության կարիքների համար «ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՃԱՄԲԱՐ (TECH-CAMP) 2023» ուսումնաճանաչողական ծրագրի իրականացման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԲՏԱՆ-ԷԱՃԾՁԲ-2023/12» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան «24» մայիսի 2023թ.
Ժամը՝ 10:00

Մասնակցում էին՝

հանձնաժողովի նախագահ՝
Հրանտ Մկրտչյան՝ ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության ծրագրերի վարչության պետ

հանձնաժողովի անդամներ՝
Վահագն Ստեփանյան՝ Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության ծրագրերի վարչության գլխավոր մասնագետ
Հրանուշ Վարդանյան՝ Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության ծրագրերի վարչության գլխավոր մասնագետ

հանձնաժողովի քարտուղար՝
Օֆելյա Ասատրյան՝ Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության գնումների բաժնի գլխավոր մասնագետ

1. Տեղեկություն՝ «ԲՏԱՆ-ԷԱՃԾՁԲ-2023/12» ծածկագրով ընթացակարգի շրջանակում ներկայացված հայտերի բացման վայրի, օրվա և ժամի մասին

1.1 հայտերը ներկայացնելու վերջնաժամկետ է սահմանվել 23.05.2023թ. ժամը 10:00-ն,
1.2 էլեկտրոնային հակադարձ աճուրդը սկսվել է հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրը՝ 24.05.2023 թ., ժամը 10:00-ին:
1.3 հայտերը բացվել են էլեկտրոնային ձևով՝ Համակարգի միջոցով,

2. Տեղեկատվություն՝ գնման հայտով սահմանված՝ գնվելիք ապրանքների գների վերաբերյալ.

Ղեկավարվելով ՀՀ Կառավարության 2017թ. մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /այսուհետ՝ Կարգ/ 40-րդ կետի 1-ին ենթակետով՝ հանձնաժողովի նախագահը հրապարակեց գնման հայտով սահմանված՝ սույն ընթացակարգի շրջանակում գնվելիք ծառայության գինը՝ մեկ թվով արտահայտված.

Գնման ընթացակարգը կազմակերպվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի /այսուհետ՝ նաև Օրենք/ 15-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին կետի հիման վրա:

Չափաբաժնի համարը	Գնվելիք ապրանքի անվանումը	Գնման հայտով սահմանված՝ գնվելիք ապրանքի գինը՝ մեկ թվով արտահայտված (ՀՀ դրամ)
1	Միջոցառումների հետ կապված ծառայություն	32 000 000

3. Էլեկտրոնային ձևով՝ Համակարգի միջոցով, հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները՝

N	Մասնակցի անվանումը (անունը)	Մասնակցի գործունեության հասցեն
1	**«Սոնլայն Կովկաս » ՍՊԸ**	ՀՀ. ք.Երևան, Եղիշե Թադևոսյան 3/1,
2	**ՋԵՄՄԱ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ԱՐՄԵՆԻ Ա/Ձ**	ՀՀ. ք. Երևան, Օհանով 13-9,
3	**«ՕԼ ՀՈԹԵԼՍ» ՍՊԸ**	ՀՀ. ք. Ստեփանավան, Գ. Նժդեհի 15-34
4	**«ՆԷԴ ԳՐՈՒՊ» ՍՊԸ**	ՀՀ, Տավուշի մարզ, ք. Բերդ, Աբովյան 51
5	**Վահրամ Թոքմաջյան Վարդանի Ա/Ձ**	ՀՀ, Ք. Գյումրի, Աբովյան փողոց, տուն 176

4. Տեղեկատվություն՝ Կարգի 32-րդ կետի 25-րդ ենթակետով նախատեսված հիմնավորումների վերաբերյալ.

Կարգի 32-րդ կետի 25-րդ ենթակետի համաձայն՝ մինչև հրավերում փոփոխությունների կատարման համար սահմանված վերջնաժամկետը լրանալը գնահատող հանձնաժողովի քարտուղարին հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից՝ հիմնավորումներ չեն ներկայացվել:

5. Տեղեկատվություն՝ հայտերի վերաբերյալ ստացված հարցումների և տրամադրված պատասխանների մասին.

Հայտերի վերաբերյալ հարցումներ չեն ստացվել, հետևաբար պատասխաններ չեն տրամադրվել:

6. «ԲՏԱՆ-ԷԱՃԾՁԲ-2023/12» ծածկագրով հակադարձ աճուրդի արդյունքները.

Հ/Հ	Մասնակցի անվանումը (անունը)	Նախնական առաջարկ /ՀՀ դրամ/			Վերջին առաջարկ /ՀՀ դրամ/			Մասնակցի կարգավիճակ
		Արժեք	ԱԱՀ	Գին	Արժեք	ԱԱՀ	Գին	
1	**«Սոնլայն Կովկաս » ՍՊԸ**	32 000 000		32 000 000	23 900 000		23 900 000	
2	**ՋԵՄՄԱ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ԱՐՄԵՆԻ Ա/Ձ**	26 666 520	20%	31 999 824	24 500 000	20%	29 400 000	
3	**«ՕԼ ՀՈԹԵԼՍ» ՍՊԸ**	31 998 888		31 998 888	25 332 334		25 332 334	
4	**«ՆԷԴ ԳՐՈՒՊ» ՍՊԸ**	320 000 000	20%	384 000 000	26 399 850	20%	31 679 820	
5	**Վահրամ Թոքմաջյան Վարդանի Ա/Ձ**	115 000 000		115 000 000	115 000 000		115 000 000	Մերժված

Էլեկտրոնային հակադարձ աճուրդը ավարտվել է՝ աճուրդն ամփոփվել է 24.05.2023թ.-ին, և Համակարգի կողմից առաջին տեղն զբաղեցրած մասնակից է համարվել **«Սոնլայն Կովկաս » ՍՊԸ**-ն:

Հանձնաժողովը որոշեց նիստը ընդմիջել մինչև կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի ե) պերբերությամբ սահմանված կարգով և ժամկետում հայտի ապահովման բնօրինակը **«Սոնլայն Կովկաս » ՍՊԸ**-ի կողմից ներկայացնելու օրվան հաջորդող աշխատանքային օրը՝ 2023թ. մայիսի 26-ին՝ ժամը 10:00-ին:

Հանձնաժողովի՝

Նախագահ՝

_____ **Հրանտ Մկրտչյան**

Անդամներ՝

_____ **Վահագն Ստեփանյան**

_____ **Հրանուշ Վարդանյան**

Քարտուղար՝

_____ **Օֆելյա Ասատրյան**